Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2 դասվարի (18 և 15 դասաժամ), քիմիայի (3 դասաժամ), պատմության (15 դասաժամ), մաթեմատիկայի (11 դասաժամ), կենսաբանության (6 դասաժամ), աշխարհագրության (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),

- 1 լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի սեպտեմբերի 7-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր ՝ժամը 09^{00} -15^{00}, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Դասվարի, մաթեմատիկայի և աշխարհագրության առարկաների մրցույթը տեղի կունենա սույն թվականի **սեպտեմբերի 27-ին ժամը 15:00:** Քիմիայի, պատմության, կենսաբանության առարկաներինը՝ **սեպտեմբերի 28-ին ժամը 15:00** Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցում.
Հասցե՝ ք. Կապան, Ա. Մանուկյան 7:
Տեղեկությունների համար զանգահարել 093-933-233, (0285)5-26-39 հեռախոսահամարներով: